

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՎՄԱՏԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ*

Ռ. Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի բժշկական ծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոնի ավագ դասախոս



Նախաբան

Զինծառայողների տրավմատիզմը (վնասվածությունը) ուսումնամարտական գործունեության նրանց վրա որոշակի ժամանակահատվածում դժբախտ պատահարների առաջացման հավանականությունը մեծացնող որոշակի միջավայրային, սոցիալ-հոգեբանական և անհատական-հոգեբանական գործոնների ազդեցության հետևանքով ստացված վնասվածքների համախումբն է¹: Իսկ վնասվածքը (տրավման) մարդու օրգանիզմի վրա արտաքին գործոնի (մեխանիկական, ֆիզիկական, քիմիական, ռադիոակտիվ և այլն) այնպիսի ազդեցությունն է, որի հետևանքով խախտվում են հյուսվածքների կառուցվածքն ու ամբողջականությունը և ֆիզիոլոգիական կենսընթացների բնականոն ընթացքը²: Տրավմատիզմը տարածված է ոչ միայն զինծառայողների շրջանում, այլև բնակչության հիվանդացության մի զգալի մասն է: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դասակարգման՝ տրավմատիզմը լինում է կանխամտածված (ինքնավնասում, խմբային և միջանձնային բռնություններ) և ոչ կանխամտածված (ձանհապարհատրանսպորտային և այլ պատահարներ, հրդեհներ, թունավորումներ, ջրահեղձություն, հարված-վնասվածքներ): Համաձայն հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասիչի՝ վնասվածքները դասակարգվում են ըստ պատճառների, տեղակայման և պատահարի վայրի³:

* Հոդվածը ներկայացվել է 16.05.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 27.05.2024:

¹ Տես *И. А. Реутский, Ю. В. Ведманов. Совершенствование и развитие мероприятий по снижению и профилактике травматизма среди военнослужащих. "Вестник Российской военно-медицинской академии", 2012, № 1* (<https://www.vmeda.org/wp-content/uploads/2016/pdf/261-265.pdf>):

² Տես նույն տեղում:

³ Տրավմատիզմի կանխարգելման ռազմավարության մասին հանգամանորեն տես ՀՀ Կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի արձանագրությունից քաղվածք՝ «Տրավմատիզմի կանխարգելմանն ուղղված ռազմավարությանը հավանություն տալու մասին», հավելված «Ռազմավարություն տրավմատիզմի կանխարգելմանն ուղղված» (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=79914>):

Մասնագիտական գրականության հաղորդած և պաշտոնական հրապարակումների տվյալների վերլուծությունից երևում է, որ տրավմատիզմը հանրային առողջապահության լուրջ պրոբլեմներից է: ԱՀԿ-ի տվյալներով՝ աշխարհում վնասվածքներից տարեկան մահանում է ավելի քան 5,8 մլն մարդ, ինչը բոլոր մահերի 10 %-ն է, իսկ շատ ավելի մեծ թվով մարդիկ դառնում են հաշմանդամ*։ Վնասվածքները դառնում են անհետաձգելի բուժօգնության և հոսպիտալացման տասնյակ միլիոնավոր դեպքերի պատճառ⁴:

Տրավմատիզմը նաև Հայաստանի Հանրապետության հանրային առողջապահության պրոբլեմներից է: ՀՀ-ում 15 տարեկանից բարձր տարիքի քաղաքացիների շրջանում գրանցված վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին պատճառների ազդեցությունների՝ ՀՀ ԱՆ առողջապահական և վերլուծական տվյալները ներկայացված են Աղ. 1-ում:

Աղյուսակ 1

15 տարեկանից բարձր քաղաքացիների շրջանում գրանցված վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին պատճառների ազդեցությունների պատկերը

Տարիներ	Բացարձակ թվեր		Մահվան բոլոր դեպքերի կառուցվածքում (%)	100 000 բնակչի հաշվով մահվան ելքեր
	դեպքեր	մահվան ելքով		
2017 թ.	43889	1042	3,8	34,97
2018 թ.	47770	1058	4,1	35,63
2019 թ.	50335	1077	4,1	36,35
2020 թ.	40737	3827	10,6	129,23
2021 թ.	37154	1087	3,2	36,69

* Եվրոպական տարածաշրջանում տրավմատիզմը մահացության և առաջնային հաշմանդամության բոլոր պատճառների շարքում զբաղեցնում է երրորդ տեղը (տես *Ղ. Անդրեասյան*, Վնասվածքների (տրավմատիզմի) հիմնախնդիրներն աշխարհում և Հայաստանում: Ե., 2017. էջ 80, «Насилие и травматизм в Европе: время, меры предупреждения и приоритетные направления действий». Европейское региональное бюро ВОЗ. Копенгаген, 2021; «Травматизм: призыв к действиям в области общественного здравоохранения в странах Европы. Обновленная информация, представленная на основе разработанных ВОЗ глобальных оценочных показателей здоровья за 2015 г.». Европейское региональное бюро ВОЗ (https://who-sandbox.squiz.cloud/_data/assets/pdf_file/0009/381780/injuries-rus.pdf): Համաձայն ԱՄՆ-ի հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի տվյալների՝ 2017 թ. այնտեղ գրանցվել է ավտովթարներից, վայր ընկնելուց, տարբեր վնասվածքներից, թունավորումներից և այլ արտաքին պատճառներից մահվան շուրջ 215 հազար դեպք (տես “10 Leading Causes of Injury Deaths by Age Group Highlighting Unintentional Injury Deaths, United States – 2017” (https://www.cdc.gov/injury/images/lc-charts/leading_causes_of_death_by_age_group_unintentional_2017_1100w850h.jpg)):

⁴ Տես *Ղ. Անդրեասյան*, Նշ. աշխ., էջ 80:

Բերված ցուցանիշների առնչությամբ հարկ է նշել, որ տրավմատիզմի առավել բարձր ցուցանիշներ գրանցվել են 20–49 տարեկան տղամարդկանց և 30–59 տարեկան կանանց շրջանում: Բոլոր տարիքային խմբերում ավելի բարձր ցուցանիշներ են գրանցվում տղամարդկանց պարագայում, ինչը մասամբ պայմանավորված է նրանց ավելի ակտիվ ֆիզիկական աշխատանքով և մեծ ռիսկայնություն ներկայացնող գործունեությամբ⁵: Վերջինս հատկապես բնորոշ է զինծառայողներին, ինչը պայմանավորված է նրանց ռազմամասնագիտական գործունեության առանձնահատկություններով:

Ի դեպ, վերլուծությունը ցույց է տալիս, որ վնասվածքների ու դրանցից մահացության, հաշմանդամության և անաշխատունակության ցուցանիշները բավական մտահոգիչ են և լուրջ սոցիալ-տնտեսական խնդիր բոլոր պետությունների թե՛ առողջապահական համակարգերի, թե՛ բժշկասոցիալական ծառայությունների համար: Ըստ այդմ արդիական է ուսումնասիրել ՀՀ ԶՈՒ-ում խաղաղ պայմաններում տրավմատիզմի մակարդակը, պարզել առաջացման պատճառահետևանքային կապերը, ներդրել տրավմատիզմի համաճարակաբանական համապարփակ հսկողության և մշտազննման արդիական համակարգեր, մշակել վնասվածքների կանխարգելմանն ու առաջացման նվազեցմանն ուղղված հնարավոր միջոցներ, դրանց տալ գիտական հիմնավորումներ, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու զինծառայողների շրջանում տրավմատիզմի ցուցանիշները, նպաստելու նրանց առողջության պահպանմանը և ընդհանուր մարտունակության մակարդակի բարձրացմանը:

Սույն ուսումնասիրության շրջանակում դիտարկել ենք խաղաղ ժամանակ տարբեր պետությունների զինված ուժերում տրավմատիզմի մակարդակը, վնասվածքների առաջացման պատճառների ու պայմանների բազմազանությունը, պատճառահետևանքային կապերը, անհրաժեշտ կանխարգելիչ քայլերը:

Տրավմատիզմի ուսումնասիրությունը տարբեր պետությունների ԶՈՒ-երում

Գրականության և պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տրավմատիզմը աշխարհի բոլոր՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող պետությունների, դրանց զինված ուժերի առողջապահական պրոբլեմ է թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական պայմաններում: Եթե պատերազմում վնասվածքների գերակշռող մասը պայմանավորված է լինում մարտական գործողությունների ընթացքում հակառակորդի կիրառած զենքի ու զինամթերքի խոցիչ և խիտահարող գործոններով (հրազենային, ականապայթյունային և այլ վիրավորումներ) և անբարենպաստ պայմաններով, ապա խաղաղ ժամանակ վնասվածքներ ստանալու հանգամանքներն ու պատճառները բազմազան են և կարող են պայմանավորված լինել ինչպես

⁵ Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018–2022 թթ.» (<https://armstat.am/am/?nid=586>):

մարտական պատրաստման, զենքով, սպառազինությամբ ու տեխնիկայով աշխատանքի և ծառայողական պարտականությունների կատարման, այնպես էլ ծառայության հետ կապ չունեցող հանգամանքներով, մասնավորապես՝ անզգուշությամբ, ճանապարհատրանսպորտային պատահարներով, զենքի հետ վարվելու կանոնների խախտմամբ և այլն⁶:

Զինված ուժերում վնասվածքները և այլ արտաքին պատճառներով առաջացած ախտահարումները լուրջ խնդիր են նաև բժշկասոցիալական տեսակետից, քանի որ դրանք զինվորական հաշմանդամության, ինչպես նաև երկարատև հոսպիտալացման, աշխատունակության կորստի, ծառայողական պարտականությունների չկատարման, զինված ուժերից վաղաժամ զորացրումների հիմնական պատճառներից են: Վնասվածքների պատճառով շարքից զինծառայողների երկարատև բացակայությունը բացասաբար է ազդում ոչ միայն նրանց անհատական պատրաստման, այլև ստորաբաժանումների գործողությունների ներդաշնակության վրա:

Հարկ է նշել, որ առողջապահական պրոբլեմներից են ոչ միայն վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին ազդակներից առաջացած ախտահարումների դեպքում բուժօգնության ցուցաբերման կազմակերպումը և հետևանքների վերացումը, այլև վնասվածքների առաջացման պատճառահետևանքային կապերի պարզումն ու դրանց կանխարգելմանն ուղղված մարտավարությունների մշակումը:

Տրավմատիզմի պրոբլեմն ուսումնասիրենք ըստ պետությունների:

ԱՄՆ: ԱՄՆ-ի Զինված ուժերում ոչ մարտական վնասվածքները լուրջ ազդեցություն են գործում զինծառայողների առողջության և մարտական պատրաստականության վրա: 2017 թ. ամբուլատոր բուժիաստատություններ ակտիվ զինծառայողների դիմելու հիմնական պատճառներից են եղել հենաշարժական համակարգի տարբեր վնասվածքներ (շուրջ 2,2 մլն)⁷: Դրանք և դրանց հետևանքները եղել են անաշխատունակության հիմնական պատճառներից: Թեև վերջին տարիներին վնասվածքների բուժման բնագավառում կան մեծ ձեռքբերումներ, այդուհանդերձ տվյալ վնասվածքները շարունակում են մնալ բժշկասոցիալական պրոբլեմ, ինչպես նաև լուրջ խոչընդոտ են դարձել սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից:

Ըստ վերլուծական տվյալների՝ ծառայողական պարտականություններ կատարելիս հենաշարժական համակարգի վնասվածքների հիմնական պատճառներից են վազքը, ֆիզիկական պատրաստման այլ պարապմունք-

⁶ Stu *V. I. Евдокимов, Д. А. Чернов, П. П. Сиващенко, А. А. Ветошкин, Н. А. Мухина*. Анализ показателей травматизма офицеров Вооруженных Сил Российской Федерации и Республики Беларусь (2003–2020 гг.). «Медико-биологические и социально-психологические проблемы безопасности в чрезвычайных ситуациях», 2021, № 3:

⁷ Stu *Joseph M. Molloy, Timothy L. Pendergrass, Ian E. Lee, Michelle C. Chervak, Keith G. Hauret, Daniel I. Rhon*. Musculoskeletal Injuries and United States Army Readiness. Part I: Overview of Injuries and their Strategic Impact. “Military Medicine”, September-October 2020, Vol. 185, Issue 9–10 (<https://doi.org/10.1093/milmed/usaa027>):

ներ, անզգուշությունը և այլն, ինչն անհրաժեշտություն է առաջացրել լրամշակելու ֆիզիկական պատրաստման և վազքի նորմացույցները՝ վնասվածքների ստացումը նվազեցնելու և կանխարգելելու համար⁸: Մարզական վնասվածքները նպաստում են ԱՄՆ-ի Բանակում հիվանդացության աճմանը: Բանակի զինծառայողների մոտ 2/3-ի պարագայում ֆիզիկական պատրաստման ընթացքում, որպես կուտակային միկրովնասվածքների արդյունք, աստիճանաբար առաջանում են հենաշարժական համակարգի վնասվածքներ: Չնայած ֆիզիկական պատրաստումը խիստ վնասվածքաբեր է, բայց և անհրաժեշտ միջոցառում է զինծառայողների գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար⁹: Այս փաստի հաշվառմամբ ԱՄՆ-ի Բանակում լրջորեն ուսումնասիրվում են մարզական վնասվածքների կանխարգելման ուղիները:

Մեծ Բրիտանիա: Բժշկական ցուցումներով Մեծ Բրիտանիայի Արքայական ծովային հետևակի անձնակազմի զորացրումների մոտ 2/3-ի պատճառը հենաշարժական համակարգի վնասվածքներն են: Մարտական պատրաստման մարզումներում ընդգրկված անձնակազմի ավելի քան 11 %-ի՝ բուժհաստատություններ դիմելու պատճառ եղել են վնասվածքները. նրանցից 62 %-ի վնասվածքները եղել են առաջնային, իսկ մոտ 38 %-ինը՝ կրկնվող, 65 %-ի վնասվածքներն առաջացել են հանկարծակի, իսկ 35 %-ինը՝ աստիճանաբար, ինչի հետևանքով նրանք դժվարացել են նշել վնասվածքի առաջացման սկզբնական պատճառը: Վնասվածքների ստացման պատճառներ են եղել մարտական պատրաստման մարզումները (88 %), բեռների տեղափոխումը (10 %) և այլ պատճառներ (2 %): Վնասվածքներ ստացածների մոտ 19 %-ն ի վիճակի չի եղել շարունակելու մարզումները լեռնային ու ցուրտ պայմաններում և ստիպված տարահանվել է հետագա բուժման ու վերականգնման համար¹⁰: Այսպիսով՝ վնասվածքների պատճառով մարզումներում ընդգրկված թվակազմի նվազումը բացասական ազդեցություն է թողնում Մեծ Բրիտանիայի Արքայական ծովային հետևակի օպերատիվ պատրաստականության վրա, որը հիմնականում նախատեսված է լեռնային և ցուրտ պայմաններում մարտական գործողություններ վարելու համար:

Ռուսաստան: Զինվորական պարտականությունների կատարման ժամանակ ՌԴ զինծառայողների շրջանում տարեկան գրանցվում են մահվան մոտ 500 և աշխատունակության կորստի հանգեցնող վնասումների մոտ

⁸ Stu Mita T. Lovalekar, John P. Abt, Timothy C. Sell, Takashi Nagai, Karen Keenan, Kim Beals, Scott M. Lephart, Michael D. Wirt. Descriptive Epidemiology of Musculoskeletal Injuries in the Army 101st Airborne (Air Assault) Division. "Military Medicine", August 2016, Vol. 181, Issue 8, նաև՝ D. Ferraby, D. Hayhurst, J. Fallowfield. Musculoskeletal Injuries in UK Service Personnel and the Impact of In-Theatre Rehabilitation During Cold Weather Warfare Training – Exercise CETUS 2020. "BMJ Military Health", 2022, N 1:

⁹ Stu Bruce H. Jones, Veronique D. Hauschild, Michelle Canham-Chervak. Musculoskeletal training injury prevention in the U.S. Army: Evolution of the science and the public health approach. "Journal of Science and Medicine in Sport", 2018, N 21:

¹⁰ Տես Ղ. Ֆերաբի և ուրիշներ, Նշ. աշխ.:

20000 դեպք: 2008–2016 թթ. պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա կատարված հետազոտության հեղինակները մշակել են կանխատեսման ռեգրեսիվ գծային մոդել, որի համաձայն՝ 2020–2022 թթ. համար կանխատեսվել էր տրավմատիզմի աճում, ինչի պատճառով էլ պետությունը նախատեսել էր վնասվածքների և արտաքին ազդակներից մահացության կանխարգելման համակարգերի կատարելագործում¹¹:

2003–2019 թթ. ՌԴ Ռազմածովային ուժեր զորակոչված զինծառայողների շրջանում տրավմատիզմի միջին տարեկան մակարդակը կազմել է (23,54 ± 2,75) ‰, առաջնային հիվանդացության մակարդակում՝ (2,54 ± 0,39) ‰, իսկ ցամաքային զորքերում, համապատասխանաբար՝ (11,23 ± 0,96) ‰ և (1,13 ± 0,15) ‰: Թե՛ Ռազմածովային ուժերում, թե՛ Ցամաքային զորքերում վնասվածքների հիմնական մասը հենաշարժական համակարգի վնասվածքներն են, համապատասխանաբար՝ 59,2 % և 56,7 %¹²:

Նույն ժամանակաշրջանում ՌԴ Ջինված ուժերի պայմանագրային զինծառայողների շրջանում վնասվածքների մակարդակը կազմել է (18,39 ± 1,74) ‰, իսկ առաջնային հիվանդացության մակարդակում՝ (3,7 ± 0,3) ‰, համապատասխանաբար՝ հոսպիտալացման ցուցանիշները կազմել են (12,12 ± 0,88) ‰ և (5,0 ± 0,4) ‰, վաղաժամ զորացումները՝ (0,24 ± 0,03) ‰ և (6,2 ± 0,7) ‰: Վնասվածքներ ստանալու հանգամանքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պայմանագրային զինծառայողները վնասվածքների գերակշռող մասը՝ 38,3 %-ը, ստացել են ծառայությունից դուրս, իսկ մարտական պատրաստման ընթացքում վնասվածքները կազմել են 17,4 %, մարտական հերթապահությունների ժամանակ՝ 3,4 %, տեխնիկայի շահագործման և սպասարկման ընթացքում՝ 4,1 %, տնտեսական և շինարարական աշխատանքներ կատարելիս՝ 5,8% և այլ հանգամանքներում՝ 24,9 %:

Գերակշռել են հենաշարժական համակարգի և զլխի շրջանի վնասվածքները, ինչպես նաև բազմավնասվածքները, երբ վնասվածքը տարածվել է 2 և ավելի անատոմիական շրջանների վրա: Պայմանագրային զինծառայողների աշխատունակության տարեկան միջին կորուստը կազմել է (311,5 ± 25,2) ‰՝ 25,5 օր: 100 հազար պայմանագրային զինծառայողի հաշվով վնասվածքներից մահացությունը կազմել է (51,48 ± 4,53) դեպք, իսկ ՀՄԴ-10 դասակարգմամբ ընդհանուր մահացությունը՝ (101,89 ± 1,12): Ընդհանուր մահացության մեջ վնասվածքներից մահվան դեպքերը կազմել են (50,5 ± 2,2) %¹³:

¹¹ Ств М. С. Овчаренко. Анализ состояния травматизма военнослужащих и поиск путей профилактики. «Молодой ученый», 2020, № 34 (324):

¹² Ств В. И. Евдокимов, И. Г. Мосягин, П. П. Сиващенко, А. А. Ветошкин. Сравнительный анализ травматизма у военнослужащих по призыву Военно-Морского Флота и Сухопутных войск России в 2003–2019 гг. «Морская медицина», июль, 2021, т. 7, № 2:

¹³ Ств В. И. Евдокимов, П. П. Сиващенко, В. В. Иванов, В. В. Хоминец. Медико-статистические показатели травм у военнослужащих контрактной службы (рядовых, сержантов и старшин) Вооруженных сил Российской Федерации (2003–2019

Կանխարգելման ուղիներ

Այսպիսով՝ աշխարհի առաջատար պետությունների ԶՈՒ-երում եղած առողջական պրոբլեմների վերլուծությունից երևում է, որ հույժ կարևորություն է տրվում տրավմատիզմին առնչվող հարցերին: Ընդսին վնասվածքների կանխարգելման գործում առանցքային դեր ունի առողջապահության համակարգը: Սակայն քանի որ վնասվածքների պատճառները բազմազան են, ուստի անհրաժեշտ է, որ այդ գործին ակտիվ կերպով մասնակցեն նաև տարբեր գերատեսչություններ՝ առողջապահական համակարգի համադասմամբ: Դա ենթադրում է սերտ համագործակցության պայմաններում տարբեր տեսակների տրավմատիզմի կանխարգելման ռազմավարությունների փուլային մշակում և ներդրում:

Վնասվածքների կանխարգելման ուղղությամբ քաղաքական և ռազմավարական գործողություններ մշակելու համար, մեր կարծիքով, առաջնահերթ քայլ պետք է դիտվի վնասվածքների համապարփակ համաձարակաբանական հսկողության համակարգի ձևավորումը, ինչով կապահովվի ամբողջ պետության մասշտաբով միասնական վնասվածքաբանական տեղեկատվական դաշտի ստեղծումը: Դա հնարավորություն կտա ոչ միայն գնահատելու տրամադրվող բժշկական ծառայությունների որակը, ուղղակի և անուղղակի ծախսերը, այլև վնասվածքները վերլուծելու ըստ տարածվածության ու ծանրության աստիճանների, վնասվածի տարիքի ու սեռի և կանխատեսելու պահանջվող բժշկական ծառայությունների ծավալները, աշխատանքից մարդկանց բացակայելու ժամանակահատվածը, կյանքի որակի ակնկալվող փոփոխությունները և այլն¹⁴:

Ամփոփում

Այսպիսով՝ բոլոր պետությունների զինված ուժերում վնասվածքներն առաջանում են ինչպես ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ, այնպես էլ ծառայությունից դուրս՝ առօրյա աշխատանքներ կատարելիս:

Վնասվածքները զինծառայողների մահվան, հաշմանդամության, վաղաժամ զորացրման և անաշխատունակության հիմնական պատճառներից են, որոնք ուղղակի ազդեցություն են գործում անձնակազմի առողջության վրա՝ իջեցնելով նրանց անհատական պատրաստականության աստիճանը, ինչն էլ բացասաբար է ազդում ընդհանրապես զինված ուժերի մարտական պատրաստության և մարտունակության վրա:

ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական ծառայության գերակա խնդիրներից մեկը անձնակազմի առողջության և մարտունակության պահպանումն ու

գ.)). «Медико-биологические и социально-психологические проблемы безопасности в чрезвычайных ситуациях», 2020, № 4:

¹⁴ Տես ՀՀ Կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի արձանագրությունից քաղված՝ «Տրավմատիզմի կանխարգելմանն ուղղված ռազմավարությանը հավանություն տալու մասին», նաև՝ Դ. Անդրեասյան, Նշ. աշխ.:

ամրապնդումն է: ՈՒստի ներկայիս փուլում, մեր կարծիքով, անհրաժեշտ է կատարել վնասվածքների առաջացման մեխանիզմների համապարփակ վերլուծություն և մշակել կամ լրամշակել դրանց կանխարգելման առավել արդյունավետ միջոցառումները՝ ինչպես միջազգային փորձի, այնպես էլ ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ Ջինված ուժերում վնասվածքների արդյունավետ կանխարգելմամբ կլուծվեն նաև մի շարք բժշկասոցիալական պրոբլեմներ, քանի որ զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ վնասվածք ստանալու հանգամանքի կապը հաստատվելու դեպքում զինծառայողը անգամ զորացրումից հետո մնում է ՀՀ ՋՈՒ-ի սոցիալական ապահովման սուբյեկտ:

Խաղաղ ժամանակ ՀՀ ՋՈՒ-ում տրավմատիզմի օրինաչափությունների վերլուծությունը արդիական նշանակություն ունի այն առումով, որ հավաստի տվյալները անհրաժեշտ են ոչ միայն տրավմատիզմի կանխարգելման ռազմավարությունների արդյունավետությունն ու հաջողությունը գնահատելու, այլև հետագա ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

ПРОБЛЕМА ВОЗНИКНОВЕНИЯ ТРАВМАТИЗМА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ В МИРНОЕ ВРЕМЯ

Ր. Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, подполковник м/с, старший лектор кафедры организации и тактики медицинской службы военно-медицинского факультета ЕГМУ

РЕЗЮМЕ

Как следует из анализа профессиональной литературы и данных официальных публикаций, травматизм является серьезной проблемой общественного здравоохранения. Травмы становятся причиной десятков миллионов случаев, требующих неотложной медицинской помощи и госпитализации. Показатели травматизма и смертности, инвалидности и нетрудоспособности в результате полученных травм вызывают обоснованную озабоченность и являются серьезной социально-экономической проблемой как для системы здравоохранения, так и для медико-социальных служб всех государств.

С особыми рисками в плане травматизма связана военная служба. Анализ показывает, что травмы являются одними из основных причин гибели, инвалидности, преждевременной демобилизации и нетрудоспособности военнослужащих, оказывая непосредственное влияние на здоровье личного состава и тем самым снижая степень их индивидуальной выучки, что негативно сказывается на боевой готовности и боеспособности вооруженных сил в целом.

Одной из приоритетных задач военно-медицинской службы Вооруженных сил РА является сохранение и укрепление здоровья и боеспособности личного состава. Поэтому на нынешнем этапе представляется необходимым проведение всеобъемлющего анализа механизмов возникновения травм у военнослужащих и разработка или доработка более эффективных мер по их профилактике с учетом как международного опыта (в статье приведены данные по ВС США, Великобритании и России), так и национальной специфики.

Посредством эффективной профилактики травматизма в Вооруженных силах РА будет решен также ряд медико-социальных проблем, поскольку в случае установления связи обстоятельства получения травмы с исполнением обязанностей военной службы военнослужащий даже после демобилизации остается субъектом социального обеспечения ВС РА.

MILITARY MEDICINE

THE PROBLEM OF THE OCCURRENCE OF INJURIES IN THE ARMED FORCES IN PEACETIME

*R. G. KIRAKOSYAN, Lieutenant Colonel of Medical Service, Senior Lecturer, Chair,
Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU*

SUMMARY

Injuries are a major problem of the public health, as the analysis of the professional literature and data from official publications suggests. Injuries cause tens of millions of cases that require emergency medical care and hospitalization. The injury and mortality rates, as well as indicators of disability and incapacity for work as a result of injuries are of reasonable concern being a serious socio-economic problem for both the health care system and the medical and social services of all states.

Military service is associated with substandard risks in terms of injuries. The analysis shows that injuries are among the main causes of death, disability, premature demobilization and incapacity for work of the servicemen, having a direct impact on the health of the personnel. This, thereby, reduces the degree of their individual skills, negatively affecting the combat readiness and combat effectiveness of the armed forces as a whole.

One of the priority tasks of the Military Medical Service of the RA Armed Forces is to preserve and strengthen the health and combat effectiveness of the personnel. Therefore, at the current stage, it seems necessary to conduct a comprehensive analysis of the mechanisms of the

occurrence of injuries in servicemen and develop or improve more efficient measures for their prevention, with a view on both international experience (the article provides data on the Armed Forces of the USA, Great Britain and Russia) and national specificities.

A number of medical and social problems will also be solved through the effective prevention of injuries in the Armed Forces of the Republic of Armenia, since if the circumstances of getting injured are ascertained to be connected with the performance of duties of military service, the serviceman remains a subject of social security of the RA Armed Forces even after demobilization.